ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

— նոյեմբերի 2022 թվականի №__ -Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի №86-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի մարտի 24-ի №86-Ա որոշմամբ սահմանվել է, որ Երևան քաղաքի Տերյան փողոց, 107 հողամաս հասցեի նոր համակարգի ջրահեռացման համակարգին միացումը իրականացվում է ժամանակավոր՝ շինարարական աշխատանքներ կատարելու նպատակով, նախատեսելով ջրահեռացման համակարգին միացումը հողամասին հարակից կոյուղագծերի օգտագործմամբ՝ մինչև «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից (այսուհետ՝ Մատակարար) 2020 թվականի նոյեմբերի 12-ին տրամադրված №ՎՋ 593/2020 տեխնիկական պայմանների համաձայն նոր ջրահեռացման համակարգի կառուցումը, իսկ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրի գործողության ժամկետը սահմանվել է 12 ամիս,

բ) Երևան քաղաքի Տերյան փողոցի 107 հողամասի կառուցապատող «ՌԵՆՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Դիմող անձ) 2022 թվականի օգոստոսի 11-ի №22-85 գրությամբ տեղեկացրել է, որ տվյալ հասցեում կատարվող քաղաքաշինական ծրագրի իրականացման նպատակով ջրահեռացման համար Մատակարարի 2020 թվականի նոյեմբերի 12-ին տրամադրած №ՎՋ 593/2020 հիմնական տեխնիկական պայմանների հիման վրա մշակված ջրահեռացման նախագիծը հաստատվել է Մատակարարի կողմից, սակայն չի հաստատվել Երևանի քաղաքապետարանի կողմից, և այս պահին տարվում են աշխատանքներ քաղաքապետարանի համար ընդունելի նոր նախագծի մշակման նպատակով, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ

քննարկումների արդյունքում որոշվել է խցանումների թիվը պակասացնելու նպատակով ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքները իրականացնել ամառային արձակուրդների ժամանակահատվածում, երբ ավտոմեքենաների հոսքը համեմատաբար քիչ է և դիմել է Հանձնաժողով՝ ևս 12 ամսով երկարաձգելու 2021 թվականի մարտի 24-ի №86-Ա որոշմամբ սահմանված ժամկետը,

գ) Մատակարարը սույն թվականի նոյեմբերի 21-ի №ՄՇ/37135 և Դիմող անձը սույն թվականի օգոստոսի 30-ի №22-87 գրություններով հայտնել են, որ չեն առարկում 2021 թվականի մարտի 24-ի №86-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելուն, և

հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 28-րդ հոդվածի 1-ին մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2021 թվականի մարտի 24-ի «Երևան քաղաքի Տերյան փողոց, 107 հողամաս հասցեի նոր համակարգը ջրահեռացման համակարգին միացնելու մասին» №86-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում «12 ամիս» բառերը փոխարինել «24 ամիս» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմող անձին և Մատակարարին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2022 թվականի օգոստոսի 30-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
—— նոյեմբերի 2022թ.